ԹԵՍՏ. ՆՊԱՏԱԿԸ, ՀԱՏԿՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԹԵՍՏ

Ի՞ՆՉ Է ԹԵՍՏԸ

Թեստը խնամքով ընտրված, ուղղորդող ցուցումներով առաջադրանքների կամ առանձին հարցերի շարք է:

Ի՞ՆՉ ՆՊԱՏԱԿՈՎ Է ԿԻՐԱՌՎՈՒՄ ԹԵՍՏԸ

Թեստը կիրառվում է սովորողների գիտելիքներն ու հմտությունները չափելու, ուսուցման արդյունքները մեկնաբանելու և ճշգրտելու նպատակով:

Ի՞ՆՉ Է ՀԱՐՑԸ

Հարցը առաջադրանքը կատարելու հանձնարարական է՝ համապատասխան ցուցումներով, որն ակնկալում է պատասխան:

ԻՆՉՊԻՍԻ՞Ն ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՀԱՐՑԸ

- Պարտադիր չէ, որ հարցն ուղեկցվի հարցական նշանով. առաջադրանքի հանձնարարականը կարող է ձևակերպվել նաև որպես անավարտ նախադասություն, հրահանգ և այլն:

- Կարևոր է, որ պահանջը ձևակերպվի պարզ, հստակ և միանշանակ:

ԻՆՉԻ՞Ն ՊԵՏՔ Է ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՆԵԼ ԹԵՍՏԸ ՄՇԱԿԵԼԻՍ

- Ու՞մ ենք ստուգելու:
- Ինչպիսի՞ գիտելիքներ ու հմտություններ ենք ստուգելու:
- Ինչպե՞ս ենք օգտագործելու արդյունքները:
- Ի՞նչ որոշումներ ենք կայացնելու արդյունքների հիման վրա:

ԻՆՉՈՒ՞ Է ԿԻՐԱՌՎՈՒՄ ԹԵՍՏԸ

- Սովորողների գիտելիքների և հմտությունների մակարդակը նախապես ստուգելու նպատակով:
- Ուսուցման և ուսումնառության գործընթացը հայտորոշելու ու բարելավելու նպատակով:
- Ընդհանուր գիտելիքների ստուգման՝ ընտրության նպատակով (մասնակցություն օլիմպիադաներին, բուհի ընդունելություն և այլն):
- Առարկայի չափորոշիչներով և համապատասխան ծրագրերով սահմանված գիտելիքների, հմտությունների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու նպատակով (թեմատիկ գրավոր և կիսամյակային ամփոփիչ աշխատանքներ):

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԹԵՍՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

- նախնական/հայտորոշիչ/դիագնոստիկ թեստ
- ամփոփիչ թեստ
- ընդհանուր գիտելիքների ստուգման թեստ

Ի՞ՆՉ Է ԹԵՍՏԻ ՀԱՏԿՈՐՈՇԻՉԸ

- Հատկորոշիչները կազմում են յուրաքանչյուր թեստի տեսական հենքը և տեղեկություն են տալիս, թե թեստը՝
- Ո՞ր դասարանի համար է նախատեսված:
- Ի՞նչ կոնկրետ նպատակ է հետապնդում:
- Ո՞ր թեմայի կամ թեմաների վերաբերյալ է կազմված:
- Ո՞ր վերջնարդյունքներն են ստուգվելու:

Ինչպես նաև

Ի՞ՆՉ Է ԹԵՍՏԻ ՀԱՏԿՈՐՈՇԻՉԸ

- առաջադրանքի տիպը
- հարցերի տեսակները
- հարցերի քանակը
- բարդության աստիճանը
- յուրաքանչյուր հարցին տրվող միավորների չափաբաժինը
- թեստի կատարմանը հատկացվող ժամանակը

ԻՆՉՊԵ՞Ս ՄՇԱԿԵԼ ԹԵՍՏԸ

- Երբ հայտնի է՝ ում, ինչը և ինչու պետք է ստուգել և ինչի նպատակով են կիրառվելու ստացված արդյունքները, կարելի է կառուցել թեստի նախագիծը և որոշել հատկորոշիչները:

- Նպատակից կախված՝ որոշվում է թեստի տեսակը (ըստ բովանդակության, կառուցվածքի, միավորները հաշվելու մեթոդների և այլն):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Կախված նպատակից՝ կիրառվում են տարբեր թեստեր:
- Տարբեր թեստեր ունեն գնահատման տարբեր առանձնահատկություններ:

Ինչպես օրինակ

ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԹԵՍ

Ո՞ՐՆ Է ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԹԵՍՏԻ ՆՊԱՏԱԿԸ

Հայտորոշիչ թեստը հայտորոշման գործիք է, որի հիմնական նպատակը ուսուցման փուլի սկզբում կամ ընթացքում նյութի յուրացման աստիճանը որոշելն է՝ սովորողների կարիքները հստակեցնելու և ուսուցման գործընթացը բարելավելու նպատակով:

ԻՆՉՊԻՍԻ՞Ն Է ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԹԵՍՏԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԹԵՍՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ստուգում են սովորողների ընդհանրական /ֆոնային/ գիտելիքները անցած թեմաներից:
- Առաջադրանքները վերաբերում են անցած տարբեր թեմաներին:
- Օգտագործվում են տարբեր տիպի՝ բազմակի ընտրության, լրացման, կարճ պատասխանով, համապատասխանեցման առաջադրանքներ:
- Հարցերը պետք է ձևակերպվեն կարճ, պարզ և մատչելի:
- Բարդության աստիճանը պետք է լինի պարզից բարդ:
- Տևողությունը հարաբերականորեն երկար է:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԹԵՍՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ստուգում են մեկ (ամենաշատը՝ երկու) հիմնական գիտելիք կամ հմտություն:
- Առաջադրանքներն ունեն որոշակի ուղղվածություն և վերաբերում են նույն թեմային:
- Առաջադրանքների ձևը պետք է բխի տվյալ թեմայի ուսուցման նպատակից:
- Օգտագործվում են հիմնականում բազմակի ընտրության, լրացման, համապատասխանեցման առաջադրանքներ:
- Հարցերը պետք է ձևակերպվեն կարճ, պարզ և մատչելի:
- Բարդության աստիճանը պետք է լինի պարզից միջին, այնպես, որ սովորողների մեծ մասի կողմից թեստը հաղթահարվի:
- Տևողությունը համապատասխանաբար կարճ է՝ մինչև 15 րոպե:

ԱՅՍՊԻՍՈՎ...

Հայտորոշիչ թեստը միտված է բարելավված ուսուցմանն ու ուսումնառությանը: